ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԱՅՐԱՔԱՂԱՔ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՐԽԻՎՆԵՐԸ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ամփոփում

Արաաշատը հիմնադրվել է մ.թ.ա. 189/188 թթ. Արտաշես I-ի կողմից, և մոտ 600 տարի եղել է Հայաստանի մայրաքաղաքը: Այն, գտնվելով միջազգային առևտրական գլխավոր ճանապարհների խաչմերուկում, շուտով դարձավ ոչ միայն Հայաստանի վարչաքաղաքական, առևտրատնտեսական և մշակութային ամենախոշոր կենտրոնը, այլև անտիկ աշխարհի մեծ ու նշանավոր քաղաքներից մեկը: Ուստի պատահական չէ, որ հայ և օտար աղբյուրները նշում են դրա գեղեցիկ ու մեծ քաղաք լինելը (Ստրաբոն, Պլուտարքոս, Տակիտոս, Խորենացի և ուրիշներ):

Արտաշատում հայտնաբերված առաջնակարգ նյութերի շարքում, իրենց գիտական բացառիկ արժեքով և տեղեկատվությամբ աչքի են ընկնում կավե կնքադրոշմները (կնքադրոշմները), որոնք հայտնաբերվել են V և VIII ըլուրների վիա: V բլրի հյուսիս-արևելյան հատվածում, քաղաքի արևմտյան ղարպասներից մեկի դիմաց, բացվել է ընակելի թաղամասի մի մասը, հյուսիս-հաբավ ձգվող փողոցի հետ միասին: Բնակելի համալիրի մեծ սենյակում ժայռի մակերեսից 10-15 սմ հաստությամբ կավե հատակի համատարած պինդ շերտի մեջ, վառված փայտածուխի, մոխրի, ինչպես նաև դեղնավուն և սպիտակավուն ինչ-որ մնացորդների հետ միասին, անկանոն ընկած վիճակում, հայտնաբերվեցին մեծ թվով կնքադրոշմներ: Կնքադրշմների հետ միասին դուրս եկան մ.թ.ա. I դ. Անտիոքի քաղաքային այղնձե դրամ և Արտաշատում կտրված Տիգրան II-ի պղնձե, լավ պահպանված դրամ: Մոտ 100 կնքադրոշմ գտնվեց նաև միջանցքում, մեծ սենյակի մուտքի մոտ: Այստեղ հատակին հայտնարերվեց Օգոստոս կայսեր Անտիոքում կտրված, պղնձե դրամ (մ.թ. Iդ. սկիզբ), ներմուծված ամֆորայի (I-IIդդ.) և տեղական խեցեղեն տարբեր անոթների ռեկորներ: Մեծ սենյակի ու միջանցքի կավե հատակին և նրա տակ գտ-

նված նյութերը պատկանում են քաղաքի առաջին շինարարական շրջանին, այսինքն մ.թ.ա. 189-188 թվականներից մինչև մ.թ. 59 թ.:

Հայտնաբերված կնքադրոշմների թիվը ութ հազարից ավելի է, որոնցից 6000, ամրողջական են, կամ ռեկորի վրայի պատկերը որոշվում է: Դրանք ներկայացնում են 1036 ինքնուրույն տիպ: Կնքադրշմների մեծ մասը կրակի մեջ ընկնելու պատճառով թրծվել է և թուխ գույն ստացել, որի շնորհիվ պահպանվել և մեզ են հասել: Նրանք, որոնք կրակից գերծ են մնացել, դարչնագույն են, փխրուն և ճաքճքված: Այսինքն քաղաքի երկրորդ շինարարական շրջանում, 60-ական թվականներին, շինքը վերականգնելիս, արխիվի մնացորդները, կնքադրոշմների մի մասը, մնացել է կավե հատակի, իսկ որոշ մասը՝ պատի շադախի մեջ: Հայտնաբերման հանգամանքները թույլ են տալիս ասել, որ կնքադրոշմների թիվն ավելի մեծ է եղել և մեզ է հասել դրանց մի մասը միայն:

Երկրորդ արխիվը հայտնարերվել է VIII բլրի հինգերորդ փողոցի արևելյան մասում բացված բնակելի համալիրում: Փոքր սենյակում ժայռի վրա, կավե հատակի միջից դուրս եկան 25 կնքադրոշմներ, որոնցից 15-ը ամրողջական են: Տունը ավերվել է հանկարծակի բռնկված հրդեհից, ուստի կնքադրոշմները թրծվել են: Այս արխիվը պատկանում է մ.թ.ա. 66-մ.թ. 59թթ. շինարարական շրջանին:

Այսպիսով, Արտաշատի կնքադրոշմների գյուտը հանդիսանում է հելլենիստական աշխարհում հայտնի ամենահարուստ հավաքածուներից մեկը: Կնքադրշմները պատրաստված են նուրբ յուղոտ կավից և հիմնականում ունեն ողորկ, փայլուն մակերես: Հայտնի է, որ կային կավերի հատուկ հանքատեսակներ, որոնք օգտագործվում էին միայն որպես կնքադրոշմի նյութ:

Նրանք պարունակում են այնպիսի օրգանական նյութեր, օրինակ՝ սպիտակ կրաքար (տալկ), որը չոր վիճակում բավականին ամուր է լինում, իսկ թեթևակի խոնավության դեպքում փափկում է: Ամենայն հավանականությամբ, Արտաշատի կնքադրոշմների հետ հայտնարերված բաը-

ծրորակ, նուրբ կավե եղկկոնաձև կիսապատրաստուկները ծառայել են կնքելու համար:

Գտնված կավագնդիկների վրա կա 1-4 դրոշմ: Գերակշռում են մեկ դրոշմահետք ունեցողները, որոնք հիմնականում տափակ են: Կնքադրոշմները ստացված են գլանաձև, բազմանիստ, շրջանաձև ու օվալաձև հարթ և ուռուցիկ մակերես ունեցող քարե և ապակե ինտալիաներով դրոշմելու հետևանքով (հաճախ դրոշմվել է նաև գեմայի բնիկը), իսկ մի քանիսը կնքված են մետաղյա մատանիներով: Կնիքները միշտ չէ, որ լավ են սեղմված. կամ կավը համապատասխան փափկություն չի ունեցել, կամ կնիքների մաշվածության պատճառով պատկերները հստակ չեն ստացվել, իսկ հաճախ անփույթ են կնքվել և պատկերները լրիվ չեն դրոշմվել:

Կնքադրոշմներն ունեն բարակ թելի մեկից վեց հորիզոնական անցքեր: Դրանց մի մասի ներքին եզերքը հարթ է, կամ տարբեր հարթություններից առաջացած ուղիղ ժապավենաձև գծեր կան: Որոշ օրինակներ բացի բարակ թելերի անցքերից, ներքևի մակերեսին ունեն տարբեր խորության և լայնության մեկ - երկու ակոս (0.5-1.8սմ), որն առաջացել է կնքադրոշմն փաթեթը կապած կաշվե նեղ ժապավենների վրա սեղմելու հետևանքով: Մի շարք կնքադրոշմների ներքին մակերեսի նեղ զուգահեռ գծիկները կամ ճմլված տեսքը վկայում են պապիրուսի կամ կաշվի վրա փակցված լինելը: Որոշ կնքադրոշմներ փակցվել են ուղղակի թելերի հանգույցի վրա կամ երկու հանգույցների միջև: Մի խումբ կնքադրոշմների եզրը հարթ մակերեսից բարձր է: Դրանք, ամենայն հավանականությամբ, կախված են եղել: Այսպիսով, Արտաշատի կնքադրոշմները փակցված են եղել պապիրուսի և մագաղաթի ծրարների, փաթեթների և տարբեր ապրանքների վրա, կամ կախված են եղել նրանցից:

Մի շարք պատկերներ հանդիպում են միայն մեկ և ավելի դրոշմ ունեցող կնքադրոշմների վրա, իսկ որոշ պատկերներ հանդիպում են միայն մի քանի կնքադրոշմ ունեցող կավագնդիկի վրա: Հավանաբար,

դրանցով կնքվել են ինչ-որ գործարքներ, որոնք հաստատվել են նաև վկաների կողմից:

Հայաստանում փաստաթղթերն արխիվներում պահելու ավանդույթները զարգացան հատկապես ուրարտական շրջանում: Առաջավորասիական մյուս երկրների նման ուրարտական պետության մեջ կնիքները եղել են ոչ միայն թալիսմաններ, այլև ծառայել են փաստաթղթերը կնքելու և զանազան գործարքները կատարելու համար: Այդ են վկայում ուրարտական հուշարձաններում հայտնաբերված մեծ թվով գլանաձև, կոնաձև, կշռաքարի նման ու այլ ձևերի կնիքները և Թոփրախ կալեից, Կարմիր բլուրից, Բաստամից հայտնարերված կնքադրոշմներն ու կավե տախտակները:[1] Թեյշեբաինիի արխիվի սեպագիր արձանագրություններով կավե տախտակները, որոնք հրաման-նամակներ են և տնտեսական փաստաթղթեր, կնքված են թագավորի և նրա բարձրաստիճան պաշտոնյաների կնիքներով:

Ուրարտական պետության անկումից հետո նրա մշակութային ավանդույթները երկար ժամանակ գոյատևեցին Հայաստանում: Հայաստանը ընկավ նախ մարերի, այնուհետև Աքեմենյանների (մ.թ.ա. 550թ.) տիրապետության տակ: Վերջիններս, օգտագործելով մինչ այդ եղած կառավարման ավանդական ձևերն ու գործավարությունը՝ մեծ հաջողությունների հասան: Թագավորական գրասենյակի ղեկավարությամբ իրականացվող ռեֆորմների շնորհիվ ձևավորվեց հզոր կենտրոնական ապարատ, որը գտնվում էր Շոշում:[2]

Մ.թ.ա. V դարում Աքեմենյանների կողմից արամեերենի ընդունումը որպես դիվանի լեզու, որոշիչ դեր ունեցավ սեպագիր փաստաթղթերի վավերացման համար: Կայսրության բոլոր սատրապություններում օգ-

---

[1] Б.Б.Пиотровский, Искусство Урарту VIII-VII вв. до н.э., Л.1962, с.105-106, рис. 70-72; И.М.Дяконов, Урартские письма и документы.М-Л.,1963,с.7-11; W.Kleiss, Bastam, an Urartian citadel com plex of the seventh century B.C., American journal of archaeology. Vol. 84, N3, 1980, p. 299-304, p l.34, 8; 35, g.

[2] М.А.Дандамаев, В.Г.Луконин, Культура и экономика древнего Ирана. М.,1980, с.118

տագործվում էր, այսպես կոչված, կպսերական արամեերեն լեզուն, որը մ.թ.ա. VդԴ. միօրինակացված էր, իսկ փաստաթղթերի համար օգտագործվում էր միևնույն ֆորմուլյարը:

Թագավորից և արքայազնից բացի կնիքներ ունեին նաև հագարապետը և մյուս պետական պաշտոնյաները, առևտրականներն ու այլ մասնավոր անձինք: Կային նաև տաճարային դպիրներ: Պետական կնիք պահողը կոչվում էր «մատանիների պետ», այսինքն կնիքը պահող (կնքապահ): Կնիքն ապահովում էր տիրոջ անձնական սեփականության իրավունքն ունեցվածքի նկատմամբ, անձեռնմխելիության երաշխիք էր տալիս: Կենցաղում այն փոխարինում էի կողպեքին: Կնքվում էր ամեն ինչն՝ դռները, պարկերը, պայուսակները, կավե և որոնզե իրերը, գրավոր փաստաթղթերը, պետական պայմանագրերի, դեկոետները, հրամանագրերը, նամակները, դատական արձանագրությունները և այլն:[3]

Ալքեմենյանների օրոք բավականին զարգացավ առևտուրը: Տեղի է ունենում առևտրի մասնագիտացում: Ստեղծվում են առևտրական ընկերություններ: Առանձնագետ մի շարք առևտրականներ, տամկարներ, զբաղվում էին միջազգային առևտրով, իսկ մեծամասնությունը կայսրության ներսում՝ ստրկավաճառությամբ, անասունների առքուվաճառքով, արմավի, ձկան, մրգերի, գինու առևտրով և այլն: Տամկարների միություններն ունեին իրենց ավագը, պետը, «տամկարների պետ»-երն ունեին իրենց կնիքները, իսկ տամկարներն իրենցը,[4] որովհետև կնիքները հանդիսանում էին ապրանքի որակի գրավականը:[5]

Փաստաթղթերն ու կնքադրոշմները պահում էին սափորների, արկղերի, եղեգնՇ կողովների, սունդուկների մեջ, կավե կամ փայտե դարակների վրա, կնքված վիճակում: Արխիվները պահպանվում էին ապահով տեղերում, գանձարաններում:

---

[3] **М.И. Максимова**, Резные камни."Античные города Северного Причерноморья". М.-Л., 1955, с.438; Տե՛ս նաև **M.I. Rostovtzeff**, Selevcid Babylonia. Bullae and seals of clay with Greek inscriptions.Yale classical studies. T. III, Neue Haven.1932. p. 9-13.
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 218-226:
[5] **M. J. Rostovtzeff**, նշվ. աշխ.., էջ 9-10:

Հելլենիստական շրջանում քաղաքների տարածման, քաղաքային կյանքի և մասնավոր սեփականության ինստիտուտի զարգացման հետևանքով կնիքները լայն տարածում ստացան: Հելլենիստական աշխարհի տարբեր մասերում հայտնաբերված արխիվները հնարավորություն են ընձեռում կնիքների օգտագործման, արխիվների, գործավարության, կնքման ձևերի բազմակողմանի ուսումնասիրության համար: Օրխոյում (Ուռուկ) հայտնաբերվել են նման եղանակով դրոշմված կնքադրոշմներ, որոնք համարվում են ամենահինը (մ.թ.ա. III-II դդ.):[6] Այժմ այդպիսիք գտնվել են նաև Արտաշատում և այլ վայրերում: Ընդունված է, որ հելլենիստական շրջանի պաշտոնական կնիքներն ավելի խոշոր են, քան անձնականները: Անտիոքոս IV-ից հետո պաշտոնական կնիքներ հանդիպում են արձանագրություններով և առանց արձանագրությունների, որոնք, սակայն իրենց չափերով, պատկերների բնույթով կամ ոճական առանձնահատկություններով տարբերվում են անձնական կնիքներից:[7] Այսինքն, կնիքը խորհրդանշում էր տիրոջ գրաված դիրքը հասարակության մեջ, պաշտոնը, մասնագիտությունը, զբաղմունքը, աշխարհայացքը:

Արտաշես I ընդունեց Երվանդունիների դիվանի կառուցվածքն ու լեզուն՝ արամեերենը: Հայաստանի գրասենյակներում (մ.թ.ա. II-Iդդ.) գործավարությունը տարվում էր արամեերեն և հունարեն լեզուներով:[8] Այսպիսով, հելլենիստական աշխարհին բնորոշ Արտաշատի արխիվները Հայաստանի համար պատահական չեն: Կնքադրոշմներ հայտնաբերվել են նաև Շիրակում՝ Բենիամինում (մ.թ.ա. I - մ.թ. Iդդ.): Դրանով կնքվել է տափաշշի բերանը:

---

[6] **M. J. Rostovtzeff**, նշվ. աշխ.., էջ 17; տես նաև **R.H. McDowell**, Stamped and inscnbed objects from Seleucia on the Tigns, Ann Arbor, 1935, p. 10:

[7] **M. J. Rostovtzeff**, նշվ. աշխ.., էջ 19-24; **R.H. McDowell**, նշվ. աշխ.., էջ 26-27; **A. Invernizzi**, Bullas de Selévcie du Tigre. Annales Archeologiqnes arabes Syriennes. Vol. XXI, 1971, Tome 1/2, s. 105-108, pl.XIX; Р.Фрай, Наследие Ирана. М., 1971, с. 203.

[8] Г.Х.Саркисян, О провинциях и провинциальных канцеляриях древней Армении. "Древний Восток и мировая культура". М., 1981, с. 100.

Գեմաների և մատանիների վրայի պատկերներն իրենց թեմատիկայով, հատկապես դիմապատկերներ, ամենաշատ շփման եգրեր ու գուգահեռներ ունեն դրամների հետ: Դրամների ու գեմաների փորագրիչներն աշխատել են նույն արհեստանոցում, իսկ երբեմն, երկուսն էլ նույն վարպետն է փորագրել: Դրամահատման կնիքներ և գեմաներ փորագրող նշանավոր վարպետներն իրենց ստեղծագործությունների վրա անհրաժեշտ են համարել դնել իրենց ստորագրությունները: Հաճախ, սակայն, նման թեմաներով դրամներ են թողարկվել տարբեր երկրների դրամահատարանների կողմից, որը դժվարացնում է գեմաների, տվյալ դեպքում կնքադրոշմների պատրաստման վայրի, պատկանելիության որոշումը:

Կնքադրոշմները 1036 ինքնուրույն տիպ են ներկայացնում, որոշ տիպեր հասնում են մի քանի հարյուր օրինակի: Դա ցույց է տալիս թե որքան ընդարձակ կապեր է ունեցել արտաշատյան աղխիվի տերը, և որքան ինտենսիվ են եղել դրանք որոշ գործակալների հետ: Արտաշատյան կնքադրոշմներից մոտ երեք տասնյակը արամեերեն և հունարեն արձանագրություններ և մոնոգրամներ են, առանց պատկերի կամ պատկերի հետ միասին: Օրինակ՝ մեղվի պատկերով կնքադրոշմներից մեկի (№ 753) վրա գլխի աջ կողմում հունարեն գրված է « Є A», տառերը:[9]

Արամեերեն արձանագրությունների հնագրագիտական տվյալները վկայում են, որ դրանք վերաբերում են մ.թ.ա. II-Ադ.:

Հելլենիստական թագավորի պատկերով № 8 կնքադրոշմը արվեստի կատարյալ գլուխգործոց է: Ենթադրվում է, որ այն պատկերում է հայոց արքա Արտաշես II –ին (I $_8$):

Կնքադրոշմներից ամենահինը արված է գլանաձև կնիքով, որտեղ պատկերված է դեպի աջ գնացող գերիների շարան: Հայտնի է, որ մ.թ.ա. Vդ. սկսած կիրառության մեջ մտած նոր ձևերի կնիքները, դժվար օգտագործելիության պատճառով աստիճանաբար գործածությունից դուրս

[9] Հունարեն արձանագրություններն ու մոնոգրամները վերծանել է Յու.Գ. Վինոգրադովը:

մղեցին գլանաձև կնիքները: Սակայն դրանց կիրառության առանձին դեպքեր կան դեռևս հելլենիստական շրջանում: Այդ մասին է վկայում նաև Արտաշատի կնքադրոշմը: Վերջինիս վրա գերիները (5 մարդ) ներկայացված են Պերսեպոլսի գանձարանի պատի վրա պատկերված սոգդերին բնորոշ տարազով (III$_{92}$):

Հին օրինակների շարքին կարելի է դասել ուղղանկյուն (բագմանիստ) կնիքով դրոշմված առլուծի որսի տեսարանը (III$_{94}$), պարսկական ու մեդական տարազով հեծյալների և հետիոտնի, արջի ու եղջերվր որսի տեսարանները (III$_{112, 121, 122, 124}$) հեծյալի և հետիոտնի, կամ հետիոտների մենամարտի պատկերով կնքադրոշմները (III$_{97-100}$), ձիու, եղջերվր և այլ կենդանիների մեջքին ու գլխին կանգնած թռչունների պատկերով կնքադրոշմները, Իրանին, Փոքր Ասիային, Վրաստանին ու Հայաստանին բնորոշ թեմաներով ու ոճական առանձնահատկություններով խոհրդանշաններ, որոնք կապված են Միջագետքի և Բակտրիայի հետ և այլն:

Այսպիսով, Արտաշատի կնքադրոշմների աշխարհագրությունը շատ ընդարձակ է և ընդգրկում է Պարթևստանից մինչև Հռոմ, Հյուսիս-Մերձսևծովյան շրջաններից մինչև Եգիպտոս: Այսինքն, Արևելքն ու Արևմուտքը ներկայացված են միասին, որը բնորոշ է Աբտաշատի արխիվներին: Կընքադրշմների վրայի պատկերներն աչքի են ընկնում թեմաների արտակարգ հարստությամբ: Ներկայացված է անտիկ աշխարհի ողջ կյանքը: Պատկերված են թագավորներ, քաղաքական գործիչներ, զորավարներ, թատերական և կոկեսային պերսոնաժներ, կենցաղը, ֆաունան և ֆլորան, կոսմոգոնիական պատկերացումները, սիմվոլիկան, տարբեր ժողովուրդների կրոնական որոշ պատկերացումները և այլն: Հասկանալի է, որ այստեղ առկա են արվեստի տարրեր դպրոցներ՝ իրենց ոճական առանձնահատկություններով: Շատ կնքադրոշմներ իրենց գեղարվեստական արժանիքներով և կատարողական վարպետությամբ անտիկ արվեստի կատարյալ գլուխգործոցներ են: Պատկերներից շատերը պար-

զապես իրենց զուգահեռներ չունեն և մեզ են հասել միայն կնքադրոշմի տեսքով:

Իրենց թեմատիկայով, կատարման եղանակով ու զուգահեռներով, սակայն, կնքադրոշմների մեծ մասը պատկանում է քաղաքացիական պատերազմների ժամանակաշրջանին, մ.թ.ա. I դ. երրորդ քառորդին: Այն ցույց է տալիս, թե անկախ իր կամքից, Հայաստանն ինչ աստիճանի էր ներքաշվել Անտոնիոս-Օկտավիանոս հակամարտության մեջ:

Անտոնիոսն Արևելք էր եկել, ոչ միայն միջոցներ հայթայթելու, այլև իրականացնելու Կեսարի երազանքը, կազմակերպելու պարթևական պատերազմը և, իրև մի նոր Ալեքսանդր, միավորելու Արևելքն ու Արևմուտքը, ստեղծելու համաշխարհային տիրապետություն:

Արտաշատի արխիվներում հայտնաբերված կնքադրոշմների մի ստվար քանակ ցույց է տալիս, որ Հայաստանն ավելի ակտիվորեն ընդգրկվեց Հռոմի, մասնավորապես հռոմեական արևելքի, առևտրական գործարքների մեջ: Դրանով կարելի է բացատրել այն, որ մեծ թիվ են կազմում նաև Հռոմը և նրա արևելյան պրովինցիաները ներկայացնող, ինչպես օրինակ, արմավենին պտուղներով, խաղողի ողկույզներով, ձկնորսության տեսարանով, ամֆորաների պատկերներով կնքադրոշմները և այլն:

Կնքադրոշմների մեջ կան օրինակներ, որոնք, հավանաբար, պաշտոնական են: Դրանց թվին կարելի է դասել Միհրդատ Եվպատորի (I_{5-7}), արևելյան թագավորների, որոնցից մեկի պատկերի կողքին մոնոգրամ կա (Արտաշես II, I_8), Անտոնիոսի (I_{27}), Կլեոպատրա I-ի (I_{39}), Կլեոպատրա VII-ի (I_2), Պոլեմոն Պոնտացու, Բոսպորի թագավոր Ասանդրայի պատկերով կնքադրոշմները (I_{21})և այլն: Սակայն կնքադրոշմների մեծ մասը մասնավոր անձանց են պատկանել: Վերջիններս իրենց զուգահեռներն ունեն պատճենահանված ապակե կնիքների մեջ և փոքր չափերի կնիքներով են դրոշմված:

Արդյոք ինչպիսի բնույթ է ունեցել V բլրի արխիվը: Մովսես Խորենացին նշում է անտիկ շրջանում գոյություն ունեցող մի քանի տեսակի արխիվների մասին՝ արքունական, մեհենական, հարկերի:[10]

Հայտնի է որ Արտաշատում եղել է մաքսատուն, ըստ երևույթին, պետք է լիներ նաև թագավորի կողմից նշանակված «քաղաքի վերակացուի» արխիվ և քաղաքային համայնքին պատկանող արխիվ:

V բլրի արխիվը արքունական չէ. որովհետև այն պետք է լիներ միջնաբերդում (II բլրում), որտեղ կենտրոնացված էին պալատական ու վարչական համալիրները:

Տաճարային լինել նույնպես չէր կարող, որովհետև այն պետք է լիներ VI բլրի վրա, որտեղ տաճարային համալիրներն էին: Հարկերի գանձման կամ մաքսատան հետ կապված կնքադրոշմներ նույնպես չկան:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բոլոր հիմքերը կան այն համարելու մասնավոր արխիվ, որտեղ պահել են պապիրուսե և մագաղաթե փաստաթղթեր:

Այն փաստը, որ բացվել է երկու արխիվ (բացառված չէ նաև նոր, այդ թվում՝ պաշտոնական, արխիվների հայտնաբերումը), ինքնըստինքյան վեայում է քաղաքի աշխույժ գործարար կյանքի, գարգացած գործավարության և փաստաթղթերի գրանցման կատարելագործված ձևերի մասին: Այն Արտաշատը դնում է արխիվներ հայտնաբերված հելլենիստական խոշոր կենտրոնների շարքում: Ինչպես վերը նշեցինք փաստաթղթերը կնքելու և արխիվներում պահելու ավանդույթը Հայաստանում հայտնի է եղել դեռևս մ.թ.ա. VIII-VII դարերում:

V-IV դարերի կնքադրոշմներ են գտնվել նաև Հին Հայաստանի առաջին մայրաքաղաք Արմավիրում,[11] իսկ սասանյան և ավելի ուշ

---

[10] Տես **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն (թարգմ. ներածությունն ու ծանոթ. Ստ.Մալխասյանի), Երևան, 1961, I, 3, II, 10, 33, 36, 60 :

[11] Б.Н.Аракелян, О некоторых результатах археологического изучения Древнего Армавира. ИЖФ. 1969, № 4, с. 168, рис. 10.

շրջանի՝ Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինում:[12] Արտաշատյան արխիվները լրացնում են այդ երկու շրջանների միջև եղած բացը, ցույց տալով գրասենյակային ավանդույթների ժառանգականությունն ու անընդհատությունը:

Արխիվները հարուստ տեղեկություններ են հաղորդում, ոչ միայն հին զլիպտիկայի պատմության վերարերյալ, թույլ են տալիս նոր տեսանկյունով նայել այն, այլև հնարավորություն են ընձեռում անտիկ աշխարհի արվեստի տարրեր դպրոցների, նրանց ազդեցությունների ու փոխազդեցությունների, պատկերագրության, Հայաստանի առևտրատնտեսական կապերի բազմակողմանի ուսումնասիրության համար և այլն: Արխիվներն արտացոլում են հին աշխարհի պատմության քաղաքական կարևորագույն դեպքերի հանգուցային պահերը, որոնցից կարևոր է հատկապես քաղաքացիական պատերազմի ավարտը նշանավորող ժամանակաշրջանը, իշխանության ու ազդեցության ոլորտների համար մղվող պայքարը, միապետության (պրինցիպատ) հաստատման ավարտը: Եվ վերջապես, արխիվները կարևոր աղբյուր են Առաջավոր Ասիայի պատմության, հայ-հռոմեական հարարերությունների մութ ու վիճելի հարցերի, և հատկապես Անտոնիոսի և Օկտավիանոսի հակամարտությանը զոհ ընկած Հայաստանի ու նրա թագավոր Արտավազդի քաղաքականության ճիշտ մեկնարանման համար: Հարց, որը մշտապես քննարկման առարկա է եղել պատմագիտության մեջ:

Հայտնաբերված արխիվների կնքադրոշմների թեմատիկայի բազմազանությունը հնարավորություն է ընձեռել ռոջ նյութը բաժանել տասը խմբերի՝ համապատասխան ենթախմբերով՝ դիմանկարներ, կանգնած և նստած մարդկանց ֆիգուրներ, կենդանիների պատկերներ, պատմական և առասպելական մոտիվներով խմբեր: Կնքադրոշմները դասակարգված են նաև ըստ գեղարվեստական ոճի և կատարման եղանակի և ներկայացնում են հետևյալ երկրները և գեղարվեստական կենտրոնները՝ Իտալիան և Հռոմի, Եգիպտոսը, Հայաստանը, Իրանը, Փոքր Ասիան, Միջագետքն ու Սիրիան, Բոսպորն ու Հյուսիս-Արևմտյան շրջանները:

---

[12] А.А. Калантарян, Раннесредневековые буллы Двина, Археологические памятники Армении, 13. Средневековые памятники, вып. VI, Ер., 1982, с. 61-68.